

ՅՕԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՏՕՆԵՐԸ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍ-
ՏԱՆՈՒՄ

—
Տրապիզոն, 10 նոյեմբեր

Հայ գրերու և տպագրութեան յօրելեանի
առթիւ հոկտ. 13-ին դպրոցական փոքրիկ
հանդէսներ կատարուած էին միայն, բայց
գլխաւոր ակտը յետաձգուած էր մինչև նո-
բընտիը պատրիարք Զաւէն արքեպիսկոպո-
սի ժամանումը:

Համեմատելով Տրապիզոն պատրիարք սրբա-
զանը պատարագ մատոյց Մեսրոպի, Սա-
հակի, գրոց վաստակաւորներու և տպագրիչ-
ներու յիշատակին: Քյարոզի մէջ, պատրիար-
քը դիտողութիւն ըրաւ, որ իր գալուստի
առթիւ եղած շուայլ ծախսերը եթէ յատ-
կացուէին տեղական դպրոցներուն, աւելի
օգտակար և արժանաւոր գործ կատարուած
կըլլար և կապահովուէր վարժարաններու
ապագան:

Կէսօրէն յետոյ կատարուեցաւ տառ ու տի-
պի յօրելեանական հանդէսը նախադահու-
թեամբ սրբազան պատրիարքին: Ներկայ

էին կառավարութեան և բոլոր տեղական
ազգերու ներկայացուցիչներն ու աչքի զար-
նող անձնաւորութիւնները, ինչպէս նաև
անգլիական, ֆրանսական, ռուսական,
աւստրիական, գերմանական, ամերիկեան,
բելժիական, իտալական և պարսկական հիւ-
պատոսներն իրենց փոխանորդներով միա-
սին:

Գարեգին վարդապետ յաջող բանախօսու-
թիւնով մը վեր հանեց ս. Մեսրոպի և ս.
Սահակի արժանիքները, անոնք,— ըսաւ,—
երբէք նման չէին այժմեան կղերականնե-
րուն, այլ լոյսի, գիտութեան առաքեալներն
էին հայ ժողովրդի համար: Օրուան տօնին
նշանակութեան մասին խօսեցան էթմէք-
ճեան և Պօղոսեան, Հնչակեան կուսակցու-
թեան կողմէ բանախօսեց Կօզիկեան: Թիւր-
քերէն լեզուով օրուան տօնին մասին շատ
յաջող խօսեցաւ պ. Թորոսը: Հայ բողոքա-
կան եղբայրները լայն և սիրայօժար մաս-
նակցութիւն ունեցան հանդէսին մէջ. ա-
նոնց կողմէ խօսեցաւ պատուելի Զաքա-
րեանը՝ նիւթ ունենալով «Հայ գրականու-
թեան ներկան ու ապագան»:

Եղան արտասանութիւններ՝ Սիամանթօյի
«Դարերու վրէժը», Ահարոնեանի «Յար-
գանք բեզ» և այլն:

Հանդէսին մասնակցեցաւ հայ երաժշտա-
կան խումբը իր նուագած մի քանի կտոր-
ներով:

Ափսոս որ կարգադրիչ մասնախումբը մոռ-
ցեր էր հրաւիրել եւրոպական լեզուներ
ով բանախօսներ, որոնք բացատրէին հան-
դէսի նշանակութիւնը ներկայ գտնուող եւ-
րոպացիներուն:

Առ հասարակ հանդէսի բովանդակութիւ-
նը թոյլ էր և ձանձրացուցիչ:

«Կրթական դպրոցական ֆօնդի» համար
բացուած հանգանակութիւնը հազիւ հազ
հասաւ 2—3000 դրուշի (մօտ 250 ռուբլի):

Երեկոյեան դարձեալ ի պատիւ տառ ու
տիպի յօբելեաններուն կազմակերպուեցաւ
ժողովրդական սեղան, մուտքի վճարով (2
րուբլի): Ներկաներու թիւը կը հասնէր
100-ի:

Բաժակաճառերու ժամանակ օսմ. պարլա-
մենտի էրզրումի երեսփոխան Գարեգին
Փաստրմաճեանը վէճի բնուեցաւ Պօլսոյ
պահպանողականներու ներկայացուցիչ Պօ-
յաճեան էֆէնդիի հետ: Վէճը պիտի մեծ-
նար, եթէ պատրիարք հայրը չմիջամտէր:
Դպրոցական ֆօնդի օգտին հանգանակու-
թիւնը թէև կը շարունակուի, բայց ոչ մի
շօշափելի արդիւնք երևան չգալը ակներև է
արդէն:

Ովսանաններ, կրակոտ ճառեր, շռայլ ծախ-
սեր և մանաւանդ ոգևորուած, բայց անվճար
խոստումներ—ահա թիւրքահայերուս յատ-
կանշական կողմը:

Երէկ երեկոյեան Տրապիզօնի սիրողները
ներկայացուցին Ահարոնեանի «Արցունքի
հովիտը», տիպ ու տառի յօբելեաններու
առթիւ: Սիրողներէն ումանք միայն յաջող
կատարեցին իրենց դերը: Ուրախալի էր օ-
րիորդներու յօժար մասնակցութիւնը, հա-
կառակ ժողովրդի բամբասանքներուն: Օ-
րիորդ Զարուհի Փերիի դերը տարաւ չա-
փազանց յաջող: Գոյացած եկամուտը յատ-
կացուած է «Կրթական ֆօնդին»:

Ներկայացուեցան մի քանի կենդանի
պատկերներ «ս. Մեսրոպ», «Աշխատանք» և
այլն:

Նուագեց հայ երաժշտական խումբը լա-
րաւոր գործիքներով: Դահլիճը զարդարուած
էր հայերէն տառերով, գրական դէմքերու
պատկերներով և բոլոր հայ թերթերու դրօ-
շակներով:

Տեղացի հասարակութիւնը գոհ մնաց:
Ներկայացումը դարձեալ պիտի կրկնուի յօ-
գուտ «Կրթական ֆօնդի»: Խ. Պօնտացի